

Բարձրագույն կրթության  
փոփոխությունների նախաձեռնում  
և կառավարում  
Տեմպուս IV ծրագիր  
Վիրտուալ փորձագիտական խումբ  
VTT

# La MANCHE ծրագրի նպատակը.

La MANCHE ծրագիրը նպատակաուղղված է

- գործընկեր երկրների բարձրագույն ուսումնական հաստատություններում կրթական գործընթացում փոփոխությունների նախաձեռնմանը,
- ղեկավարման կարողությունների կատարելագործմանը,
- որոշումների կայացման գործընթացում ուսանողների ակտիվ ներգրավվածությանը:

- Ծրագրի գործընկեր երկրներում բարձրագույն կրթության ոլորտում ակտիվ երկխոսության և լավագույն փորձի փոխանակման համար ստեղծվել է Lamanche VTT (վիրտուալ փորձագիտական խումբ) առցանց պորտալը, որը համախմբելու է բարձրագույն կրթության ոլորտի տարբեր շահառուների, ովքեր իրենց փորձը, գիտելիքները միավորելու են բարձրագույն կրթության ոլորտում փոփոխությունների իրականացման համար:

# Վիրտուալ փորձագիտական խումբ *La MANCHE VTT*

Ծրագրի վիրտուալ փորձագիտական խումբը

- ❖ իրենից ներկայացնում է նորարարական ցանցային խումբ, որը նախաձեռնում է կայուն երկխոսություն կրթական բարեփոխումների վերաբերյալ ծրագրում ներգրավված երկրների համապատասխան շահառուների միջև,
- ❖ ստեղծում է առցանց պլատֆորմ բարձրագույն կրթության կառավարման ոլորտում խորհրդատվության, լավագույն փորձի փոխանակման համար:

# Ծրագրի վիրտուալ փորձագիտական խմբի ստեղծում

2014թ.-ի հունիսի 29-ին Երևանում ծրագրի շրջանակներում կազմակերպված հերթական հանդիպման ընթացքում ծրագրի 29 գործընկեր հաստատությունների կողմից պաշտոնապես տրվեց ծրագրի վիրտուալ փորձագիտական խմբի աշխատանքների մեկնարկը:

<http://lamanchetempus.eu/index/page/235>



Այս վիրտուալ խմբի հիմնական նպատակը.

- ❖ ծրագրի մասնակից արևելյան գործընկերության երկրներում բարձրագույն կրթության փոփոխությունների նախաձեռնմանն ու կառավարմանն միտված ռազմավարության համատեղ մշակումն է: Այն նպատակաուղղված է բարձրացնելու տեղեկացվածությունը եվրոպական բարձրագույն կրթության արդիականացման գործընթացի վերաբերյալ և վերձանելու է այն գործընթացները, որոնք անհրաժեշտ են բարձրագույն կրթության ոլորտում արմատական փոփոխությունների իրականացման համար:

## Նախատեսված գործընթացներ.

Ծրագրի վիրտուալ փորձագիտական խմբի անդամները կստեղծեն մի կայուն առցանց միություն, որը միավորելու է բարձրագույն կրթության ոլորտի մի շարք շահառուների ջանքերը և փորձը, որոնք էլ մասնակցելու են համալսարանի ղեկավարման գործընթացին՝ աջակցելով այն բարձրագույն ուսումնական հաստատություններին, որոնք գտնվում են բարձրագույն կրթության ոլորտում փոփոխությունների նախաձեռնման անցումային փուլում:



# VTT անդամակցություն

- ❖ Ծրագրի կոնսորցիումին չպատկանող գործընկերերկրների բոլոր համալսարանների ղեկավար անձնակազմը,
- ❖ որոշումների կայացման գործընթացում ընդգրկված անդամները,
- ❖ գործարարության ոլորտի ղեկավար անձինք,
- ❖ քաղաքացիական ծառայողները, հասարակական կազմակերպությունները,
- ❖ ուսանողական կազմակերպությունների անդամները,

❖ փաստաբանները, ովքեր ընդգրկված են բարձրագույն կրթության ոլորտում գենդերային հավասարությանն ուղղված աշխատանքներում

հրավիրվում են գրանցվելու La

MANCHE ծրագրի VTT պորտալում:

**La MANCHE** ծրագրի VTT անդամակցելու համար անհրաժեշտ է գրանցվել առցանց La MANCHE ծրագրի պաշտոնական ինտերնետային կայքում ([www.lamanche-tempus.eu](http://www.lamanche-tempus.eu)) La MANCHE VTT քաժնում: Նախնական գրանցումից հետո համապատասխան անդամը պետք է տրամադրի էլեկտրոնային հասցե և ազգանուն: Առցանց պլատֆորմ մուտք գործելու համար VTT անդամի էլեկտրոնային հասցեին ուղղարկվելու է գաղտնաբառ:



# La MANCHE VTT անդամների հիմնական պարտականությունները.

- La MANCHE VTT անդամները կամավոր կերպով իրենց ջանքերը համախմբելու են 5 գործընկեր երկրներում “Բարձրագույն կրթության փոփոխությունների նախաձեռնում և կառավարում” ծրագրի ռազմավարության մշակման համար:
- կիսելու են իրենց փորձը համալսարանի ղեկավարման և բարձրագույն կրթության բարեփոխումների վերաբերյալ ծրագրի գործընկեր այլ հաստատությունների և VTT անդամների հետ:

## La MANCHE VTT անդամները

- VTT պորտալի “Խորհրդատվական բաժնում” մասնակցելու են առցանց քննարկումների ծրագրի շրջանակներում առաջադրված հատուկ թեմաների վերաբերյալ,
- La MANCHE ծրագրի գործընկեր հաստատությունների հետ միասին առաջադրում են նոր քննարկման թեմաներ և համապատասխան թեմայի նախնական տարբերակը ուղղարկում են հետևյալ էլեկտրոնային հասեցին՝ [lamanche@vumk.eu](mailto:lamanche@vumk.eu) հրապարակման համար,

- Տեղեկատվության հրապարակումից հետո հողվածի հեղինակը “Խորհրդատվական բաժնի” շրջանակներում կազմակերպում է քննարկում ծրագրի VTT այլ անդամների հետ: Քննարկումից հետո հողվածի հեղինակը պատրաստում է հաղորդագրություն քննարկումից բխող արդյունքների և եզրակացության վերաբերյալ: Հաղորդագրությունում ամփոփած գաղափարները հետագայում ներառվելու են La MANCHE ծրագրի ռազմավարության մեջ:



# Շնորհակալություն